

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի
հունվարի 27-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա. Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս. Մանուկյան

Ներկա էին՝ 37 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Օրակարգ.

1. Եզրափակիչ քննությունների ընթացքը ֆակուլտետում
/զեկ. փոխդեկան դոց. Ա.Թ. Գրիգորյան/
2. Դասախոսների որակավորման բարձրացման ընթացքը ֆակուլտետում
/զեկ. փոխդեկան պրոֆ Վ.Պ. Վարդանյան/
3. Ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի թեմաների
կատարման ընթացքը ֆակուլտետում: /զեկ. ամբ. վարիչներ/
4. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
/զեկ. Սոց-տնտ. աշխ. ամբ. վարիչ, դոց. Ա. Հ. Պոտոսյան/
5. Գիտական հաղորդում
6. Ընթացիկ հարցեր

ԼՄԵՅԻՆ – Փոխդեկան Ա.Թ. Գրիգորյանի հաղորդումը 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի եզրափակիչ քննությունների վերաբերյալ: Ա. Գրիգորյանը ներկայացրեց եզրափակիչ քննությունների ընթացքը: Խոսքում Ա. Գրիգորյանը նշեց, որ բոլոր մասնագիտությունների ուղղությամբ քննությունների գրաֆիկները կազմվել են ժամանակին, գրաֆիկներից շեղումներ չեն եղել: Խոսքի ընթացքում Ա. Գրիգորյանը թվարկեց անբավարարների ռիսկային քանակը, որոնց թվին էին դասվում նաև ուսման վարձը չվճարած, և հետևաբար, քննություններին չմասնակցած ուսանողներ: Վերջում Ա. Գրիգորյանը հավելեց քննություններին ուսանողների ստուգման գրքույկներով ներկայանալու գովելի փաստը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թ.Գ.Վարդանյան – Քննությունների ընթացքի մասին իր խոսքում Թ.Վարդանյանը շեշտեց որոշ կուրսերում անբավարարների առկայությունը, օտար լեզուներից միայն բարձր գնահատականների առկայությունը: Թ.Վարդանյանն առաջարկեց բացի դասավանդող դասախոսից քննության ընթացքն ապահովել ևս 1 մասնագետի ներկայությամբ:

Ս.Ռ.Սուվարյան – Ս.Սուվարյանը իր խոսքում հայտնեց իր տեսակետը. – Գնահատելը կամ թվանշան դնելը դա ուսանողի գիտելիքի գնահատման օգնող ցուցանիշ է, ընթացիկ պահի գնահատում:

Մ.Գ.Մանասյան – Մանասյանն իր խոսքում առանձնացրեց ուսանողի ներկայացրած նյութի բովանդակային մասի գնահատելը, ինչը կրերի ուսանողի իրական գիտելիքի գնահատմանը: Ելույթում Մ.Մանասյանն առաջարկեց իրականացնել առարկայական ռեյտինգային քանակական մշակում:

Մ.Ա.Գրիգորյան – Իր խոսքում Մ.Գրիգորյանը խիստ կարևորեց ամբիոնի դերը ուսանողների որակի պատրաստման գործում: Նա նշեց, որ ամբիոնից պետք է սկսվի ուսանողների որակի պատշաճ մակարդակը: Մ.Գրիգորյանը հավելեց, որ ռեկտորատի կողմից կազմակերպվում են <դասախոսն ուսանողների աչքերով> անանուն և խիստ գաղտնի հարցումներ: Հարցումների արդյունքում ստացված գործակիցները հաշվի են առնվելու ցանկացած դասախոսի որևէ պաշտոնում ընտրվելու ժամանակ: Դասախոսների ծանրաբեռնվածությունը հաստատվում է ամբիոնի կողմից և ամբիոնի վարիչի առաջարկությամբ: Անգլերենի ուսուցման մակարդակը պարզելու համար ստուգարքների և քննությունների ընթացքում անհրաժեշտ է նույն ամբիոնից հրավիրել մասնագետներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն

ՀՄԵՑԻՆ – Փոխդեկան Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը ֆակուլտետում դասախոսների որակավորման բարձրացման ընթացքի վերաբերյալ: Վ.Վարդանյանը նշեց, որ որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման առաջին փուլը 2016 թվականին ավարտվեց: Ֆակուլտետի դասախոսների 95% առաջին փուլում անցել և հավաքել են պահանջված 30 կրեդիտ նվազագույն շեմը: Հերթական փուլի անցկացման ժամանակացույցն ուղղարկված են ամբիոնի վարիչներին,

ըստ որի փետրվարի 23-ից սկսվելու է նոր փուլ, որտեղ կրկին կարող են մասնակցել նախորդ փուլում 30 կրեդիտ հավաքած դասախոսները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն

ՀՄԵՑԻՆ – ամբիոնի վարիչներ Թ.Գ.Վարդանյանի, Ա.Հ.Պոտոսյանի, Պ.Գ.Դավթյանի, Ս.Ռ.Սուվարյանի, Ս.Հ.Հայրոյանի, Գ.Վ.Մարկոսյանի Շ,Վ.Խաչատրյանի և ՕՀՀ ամբիոնի դոց. Հ.Ի.Սովսիսյանի հաղորդումը ավարտական հաշվետվությունների և մագիստրոսական թեզերի թեմաների կատարման ընթացքի վերաբերյալ: Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքների նյութը հանդիսանում է արտադրական պրակտիկայի ընթացքում հավաքած նյութերը: Բակալավրի և մագիստրատուրայի ուսանողները համաձայն հաստատված գրաֆիկի պարբերաբար հանդիպում են իրենց ղեկավարների հետ: Իրենց խոսքում ամբիոնի վարիչները նշեցին նաև որ որոշ ուսանողներ ոչ հաճախակի են հանդիպում ամբիոնի կողմից անցկացվող քննարկումներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Գ.Մանասյան – Իր խոսքում Մ.Մանասյանը Խորհրդի ուշադրությունը հրավիրեց որոշ հարցերի վրա, որոնք առաջ են բերում ուսանողի անտարբերությունը:
- Ուսանողների որոշ մասը գրականության հետ աշխատելու պարզ կարողություն չունեն: Աշխատանքի որոշ մասը ինքնուրույն չի կատարվում, ասաց նա:

Մ.Ա.Գրիգորյանը – Գրիգորյանն իր ելույթում առաջարկեց կուրսայինների և ավարտական հաշվետվությունների թեմաներն ու վերնագրերն ընտրել այնպես, որ վերջիններս ռեֆերատիվ բնույթ չկրեն՝ ինչը հնարավորություն կտա ուսանողին ինքնուրույն կատարելու աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ՀՄԵՑԻՆ - <Սոցիալ-տնտեսական աշխարհագրության> ամբիոնի վարիչ՝ Ա.Հ.Պոտոսյանի հաշվետվությունը: Նա ներկայացրեց ամբիոնի գործունեությունը: Ամբիոնում աշխատանքներ են տարվում թե՛ ուսումնական և թե՛ գիտական ուղղություններով: Ընթացիկ տարվա գործունեության ընթացքում ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են մենագրություններ, գրքեր,

հողվածներ և ձեռնարկներ: Ամբիոնում, գործող կանոնակարգի համաձայն, տարեկան 12-14 անգամ հրավիրվում են նիստեր, որտեղ քննարկվում են ամբիոնին հուզող բոլոր հարցերը: /գեկույցը կցվում է/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Գ.Մանասյանը – Բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն: Իր խոսքում Մ.Մանասյանը գովելի համարեց ամբիոնում կազմակերպած միջազգային կոնֆերանսը, որի կայացման համար իրենց լուսան էին ներդրել նաև ֆակուլտետում գործող այլ ամբիոնները: Մ.Մանասյանն իր խոսքում առաջարկեց, որպեսզի ամբիոնը հետամուտ լինի տպագրված հոդվածներին՝ դրանց գիտական, գաղափարական և բովանդակային գնահատման առումով:

Ս.Ռ.Սուվարյանը – Լսելով ամբիոնի վարիչի հաշվետվությունը բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն: Ս.Սուվարյանը նշեց, որ սոցիալ-տնտեսական աշխարհագրություն մասնագիտությունը կիրառական ասպեկտների լայն հնարավորություն ունի, որի շրջանակներում է նաև սերվիս մասնագիտությունը: Այս փաստը հնարավորություն է ընձեռում համատեղ կազմակերպել միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ և գեկույցներ: Ամբիոնում իրականացվող ցանկացած գործընթաց պետք է միտված լինի ուսանողի որակի բարձրացմանը, խոսքի վերջում հավելեց Ս.Սուվարյանը:

Վ.Պ.Վարդանյան – Բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն:

Մ.Ա.Գրիգորյան – Բավարար գնահատեց ամբիոնի կողմից կատարած աշխատանքը և առաջարկեց հաստատել այն: Մ.Գրիգորյանը շեշտեց ամբիոնի վարիչների հաշվետվությունների անհրաժեշտությունը՝ ամբիոնում իրականացվող աշխատանքները բարելավելու համար: Անդրադառնալով ելույթներից մեկին՝ Մ.Գրիգորյանը նշեց, որ հոդվածները ներկայացվում են տպագրության ամբիոնի որոշմամբ ամբիոնի վարիչի տրված դրական կարծիքի հիման վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել հաշվետու ժամանակաշրջանում <Սոցիալ-տնտեսական աշխարհագրության> ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԼՄԵՑԻՆ – Երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Մ.Ս.Մկրտչյանի գիտական հաղորդումը <Ջրամատակարարման նպատակով հնաջրաերկրաբանական ուսումնասիրություններ, պայմանավորված մակերևութային և ստորերկրյա ջրբաժանների փոխադարձ կապով (Արագածի հրաբխային լեռնազանգվածի օրինակով)> ատենախոսության թեմայով կատարած ուսումնասիրությունների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Ա.Գրիգորյանը – Մ.Գրիգորյանը նշեց, որ Մ.Մկրտչյանը իր աշխատանքի ընթացքում կատարել է գիտական խոր ուսումնասիրություններ և բարձր գնահատեց նրա կատարած աշխատանքը նշված բնագավառում:

Վ.Պ.Վարդանյան – Իր խոսքում նա նշեց, որ կատարվել է մեծ աշխատանք: Իրականացվել է հետևողական ուսումնասիրություն մակերևութային և ստորերկրյա ջրբաժանների փոխադարձ կապի բացահայտման ուղղությամբ:

Ա.Ս.Սարգսյան – Իր խոսքում նշեց, որ կատարվել է արդյունավետ աշխատանք: Իրականացվել է մեծ ծավալի ուսումնասիրություն երկրաֆիզիկական դաշտերի և հանքավայրի միջև կապը գտնելու համար:

Բոլոր հարցերին Մ.Ս.Մկրտչյանը տվեց հանգամանալից պատասխաններ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երկրաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Մ.Ս.Մկրտչյանի գիտական հաղորդումը «Ջրամատակարարման նպատակով հնաջրաերկրաբանական ուսումնասիրություններ, պայմանավորված մակերևութային և ստորերկրյա ջրբաժանների փոխադարձ կապով (Արագածի հրաբխային լեռնազանգվածի օրինակով)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել պաշտպանության և տալ համապատասխան եզրակացություն:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

ԼՄԵՑԻՆ – Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը ԵՊՀ Խորհրդի անդամ առաջադրելու վերաբերյալ և առաջարկեց Թ.Գ.Վարդանյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով երկար տարիների աշխատանքային փորձը՝ հաստատել Թ.Գ.Վարդանյանի թեկնածությունը ԵՊՀ Խորհրդի անդամ

ՀՄԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Սերվիսի ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Ամալյա Վարդանի Նավասարդյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Սերվիսի ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Ամալյա Նավասարդյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Զբոսաշրջության դեստինացիաների առանձնացումը և գնահատումը ՀՀ-ում՝ Ադսոն հովտի օրինակով» (ԻԴ. 03.02, Սերվիս) վերնագրով և գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանին:

ՀՄԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Գագիկի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ դոց.դոց.Ա.Հ.Պոտոսյանը, Ն.Ա.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երևանի պետական համալսարանի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Գագիկի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման աշխարհագրական ասպեկտները» (ԻԴ. 03.02, Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն) վերնագրով: Գիտական ղեկավար հաստատել աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանին:

ՀՄԵՅԻՆ – Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական կենտրոն և ցանց հիմնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական կենտրոն և ցանց ստեղծումը:

ՀՄԵՅԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը պրոֆ.Մանասյանի կողմից տպագրված Մ.Մանասյան և Հ.Մանասյան հեղինակությամբ <Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն> վերնագրով ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի ուսանողների համար: Նշվեց, որ պ-ն Մ.Մանասյանը վերոհիշյալ ձեռնարկը հրատարակել է Տիգրան Մեծ հրատարակչությունում՝ նշելով, որ այն երաշխավորված է ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտխորհրդի կողմից: Նշվեց, որ <Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն> ձեռնարկը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գիտխորհրդի կողմից չի քննարկվել և բնականաբար չի երաշխավորվել այն հրատարակելու համար:

Այսպիսով պ-ն Մ.Մանասյանը թույլ է տվել պրոֆեսորին ոչ վայել արարք՝ խախտելով էթիկայի կանոնները, ինչն անընդունելի է: Նշվեց նաև որ այդ ձեռնարկը հրատարակվել է ավելի վաղ քան այդ հարցը բարձրացվել էր Մեթոդխորհրդում և Գիտխորհրդում քննարկելու:

Նշված ձեռնարկը չի կարելի դիտարկել որպես հրատարակված աշխատություն և համաձայն ԵՊՀ-ում ընդունված կարգի այն չի կարող ներկայացվել որպես հրատարակված ուսումնական ձեռնարկ և հեղինակներին հավելավճար չի հատկացվելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.Մանասյանն ընդունեց իր կողմից թույլ տրված սխալը, նշելով, որ աշխատանքը քննարկվել է ամբիոնում և ներկայացվել ֆակուլտետի Մեթոդխորհուրդ՝ քննարկելու նպատակով:

Մեթոդխորհրդի նախագահ՝ **Թ.Վարդանյանը** նշեց, որ աշխատանքը քննարկվել է ֆակուլտետի Մեթոդխորհրդում, եղել են տարբեր կարծիքներ, տարաձայնություններ ձեռնարկը հրատարակելու վերաբերյալ: Ելնելով

դրանից՝ Մեթոդխորհուրդը չի երաշխավորել այն տպագրության և որոշում է կայացրել այն ներկայացնել Գիտխորհուրդին:

Ս.Սուվարյանը նշեց, որ դատապարտելի է նման վարքագիծը:

- Դա ոչ միայն էթիկայի նորմերի, այլ նաև իրավական նորմերի կոպիտ խախտում է,- ասաց Ս.Սուվարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դատապարտել պրոֆ.Մանասյանի կողմից թույլ տրված կեղծիքը քանի որ համալսարանի պրոֆեսորի կողմից դրսևորած նման վարքագիծը անընդունելի է: Հարցի քննարկումը տեղափոխել ռեկտորատ:

ՀՄԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը <Ղևոնդ Ալիշան>-ի և <Տիգրան Զրբաշյան>-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Արաջարկվեց Աշխարհագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սարգիս Արտյոմի Սարգսյանի և Երկրաբանության մագիստրատուրայի բաժնի 1-ին կուրսի ուսանող Արգինե Գարեգինի Բաբաջանյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով Սարգիս Արտյոմի Սարգսյանի և Արգինե Գարեգինի Բաբաջանյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել <Ղևոնդ Ալիշան>-ի և <Տիգրան Զրբաշյան>-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան